

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՀԻՄՆԱԴՐԱՄ)  
ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ  
ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՀԻՄՆԱԴՐԱՄ)  
ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ  
ԿԱՐԳ

Հաստատված է ՀԱՊՀ Գիտական խորհրդի 2018թ. փետրվարի  
27-ի նիստի թիվ 43 որոշմամբ

ԵՐԵՎԱՆ 2018

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՀԻՄԱԴՐԱՄ) ԳԻՏԱՄԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գիտամանկավարժական պաշտոնատեղերի ձևավորման, տեղակայման, առանձին դեպքերում՝ պաշտոններում նշանակման և պայմանագրերի վերակնքման սկզբունքները:

2. Կարգի հիմքում ընկած են Հայաստանի Հանրապետության «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքները և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը:

3. Համալսարանի գիտամանկավարժական կազմի թափուր պաշտոնների տեղակալումն իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրերի, որոնք կնքվում է մինչև 5 տարի ժամկետով: Աշխատանքային պայմանագրի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրությունը (բացառությամբ աշխատանքային պայմանագիրը վերակնքելու և գիտամանկավարժական նշանակովի պաշտոններ զբաղեցնելու դեպքերի):

## II. ԳԻՏԱՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՊԱԵՏՈՒՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐՎԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Համալսարանում սահմանվում են գիտամանկավարժական կազմի հետևյալ տարակարգերը՝ դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր:

5. **Դասախոսի** պաշտոն կարող են զբաղեցնել անձիք, ովքեր համապատասխան կամ հարակից մասնագիտության գծով ունեն մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կամ դրանց համարժեք որակավորման աստիճան:

6. **Ասիստենտի** պաշտոն կարող են զբաղեցնել անձիք, ովքեր համապատասխան կամ հարակից մասնագիտության գծով ունեն գիտական աստիճան կամ ավարտել են ասպիրանտուրան:

7. **Դոցենտի** պաշտոն կարող են զբաղեցնել անձիք, ովքեր համապատասխան կամ հարակից մասնագիտության գծով ունեն պրոֆեսորի, դոցենտի կամ դրան համարժեք գիտական կոչում և բուհում մանկավարժական աշխատանքի առնվազն 5 տարվա ստաժ:

8. **Պրոֆեսորի** պաշտոն կարող են զբաղեցնել անձիք, ովքեր համապատասխան կամ հարակից մասնագիտության գծով ունեն պրոֆեսորի գիտական կոչում և բուհում մանկավարժական աշխատանքի առնվազն 10 տարվա ստաժ:

9. Գիտամանկավարժական վերոնշյալ ընտրովի պաշտոններին զուգահեռ՝ Համալսարանում գործում են նաև գիտամանկավարժական և շակտկովի պաշտոններ:

• **խորհրդատու պրոֆեսոր (դոցենտ)**՝ ՀՀ կամ արտասահմանյան բուհերից, հետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններից հրավիրված և Համալսարանում մասնակի կամ լրիվ դրով ծախսերով համապատասխան պաշտոնում ծա-

մանակավորապես ձևակերպված մասնագետ, ով ունի համապատասխան գիտական աստիճան (կոչում): Սույն պաշտոնատարի հիմնական խնդիրներն են՝ վարել հատուկ դասընթացներ և գիտական սեմինարներ, ներդնել նոր կրթական ծրագրեր և տեխնոլոգիաներ, ուսուցման և կառավարման մեթոդներ:

• **համատեղող պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս**՝ Համալսարանի կամ այլ բուհի, ինչպես նաև հետազոտական և գիտաարտադրական կազմակերպությունների (ձեռնարկությունների), որպես կանոն, համապատասխան գիտական աստիճան (կոչում) ունեցող աշխատանքային պայմանագրով ձևակերպված մասնագետ, ով ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ իրականացնում է գիտամանկավարժական գործունեություն:

10. Համալսարանի Գիտական խորհուրդը վաստակաշատ պրոֆեսորներին, սահմանված կարգով, կարող է շնորհել **պատվավոր պրոֆեսորի կոչում**՝ ստավել ակնհայտ գիտամանկավարժական ավանդի և Համալսարանին մատուցած բացառիկ ծառայությունների համար: Պատվավոր պրոֆեսորի կոչում կարող է շնորհվել ինչպես Համալսարանի պրոֆեսորներին, այնպես էլ իրենց գործունեությամբ Համալսարանի հետ կապված Հայաստանի և արտերկրի գիտնականներին:

11. Համալսարանում և Համալսարանից դուրս վարչական, ընտրովի պաշտոններում աշխատանքի անցած դասախոսները կարող են համատեղության կարգով, ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ, պահպանել իրենց գիտամանկավարժական պաշտոնը և մասնակցել գիտամանկավարժական պաշտոնների տեղակալման գործընթացին՝ համաձայն սույն կարգի IV բաժնում սահմանված դրույթների: Համալսարանում վարչական կամ ընտրովի պաշտոններում լիազորությունների ավարտից հետո նրանք ապահովվում են Համալսարանում գիտամանկավարժական համապատասխան պաշտոնով:



### III. ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

12. Գիտամանկավարժական կազմի պաշտոնների տեղակալման չափանիշներն են՝

ա) հավակնորդի բարձրագույն կրթության որակավորման աստիճանը/գիտական աստիճանը և կոչումը,

բ) գիտամանկավարժական աշխատանքի ստաժը,

գ) ուսումնական, հետազոտական, մեթոդական-կազմակերպչական գործունեության արդյունքները,

դ) վերապատրաստման (որակավորման բարձրացման) հավաստագիրը/արդյունքները (առկայության դեպքում),

ե) ուսանողների կողմից դասախոսի գործունեության գնահատման արդյունքները (առկայության դեպքում):

13. Գիտամանկավարժական կազմի թափուր պաշտոնների, բացառությամբ դասախոսի, հավակնորդները պետք է ունենան վերջին 5 տարում տպագրված մենագրություն/դասագիրք կամ առնվազն 3 ուսումնամեթոդական կամ գիտական աշխատանք՝ տպագրված ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում» կամ արտասահմանյան պարբերականներում:

14. Գիտամանկավարժական պաշտոնների տեղակալման համար սահմանվում են ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության հետևյալ բաղադրիչները.

#### 14. 1. Պրոֆեսորի համար՝

ա) բակալավրի, մագիստրոսի կամ ասպիրանտների/հայցորդների կրթական ծրագրերով դասախոսությունների վարում, բ) գիտական սեմինարների վարում,

գ) ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների ղեկավարում,

դ) կուրսային աշխատանքների/նախագծերի, հետազոտական աշխատանքների ղեկավարում,

ե) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին մասնակցություն,

զ) մասնակցություն նոր կրթական ծրագրերի և դրանց բաղկացուցիչ դասընթացների մշակմանը, մոնիթորինգին և վերանայմանը,

է) գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների իրականացում և հրատարակում,

ը) հանրապետական և միջազգային գիտաժողովներում գեկուցումներ,

թ) ամբիոնում հետազոտական խմբի, լաբորատորիայի հիմնման նախաձեռնությունների (հայտերի) իրականացում,

ժ) հանրապետական և արտասահմանյան բուհերի ու գիտակազմակերպչական, գիտամեթոդական, փորձագիտական, ինչպես նաև գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների, հանձնախմբերի, հանրապետական և միջազգային գիտատեխնիկական միությունների, ընկերակցությունների և այլ մարմինների աշխատանքներին մասնակցություն:

#### 14.2. *Ղեկնասի* համար՝

ա) միջին մասնագիտական, բակալավրի, մագիստրոսի կամ ասպիրանտների/հայցորդների կրթական ծրագրերով դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների վարում,

բ) գիտական սեմինարների վարում,

գ) ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, իսկ սահմանված կարգով թույլատրված դեպքերում՝ ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների ղեկավարում,

դ) հաշվեգրաֆիկական, կուրսային աշխատանքների/ նախագծերի և հետազոտական աշխատանքների ղեկավարում,

ե) ուսումնական, արտադրական, նախաավարտական և հետազոտական պրակտիկաների ղեկավարում,

զ) ամբիոնի ուսումնամեթոդական և հետազոտական աշխատանքներին մասնակցություն, գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակում,

է) հանրապետական և միջազգային գիտաժողովներում զեկուցումների ներկայացում,

ը) ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի, խորհուրդների, որակավորման և գիտական աստիճաններ շնորհող մարմինների, փորձագիտական և խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքներին մասնակցություն:

#### 14.3. *Ասիստենտի* համար՝

ա) միջին մասնագիտական, բակալավրի կրթական ծրագրերով դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների վարում,

բ) ավարտական աշխատանքների և հաշվեգրաֆիկական, կուրսային աշխատանքների/նախագծերի ղեկավարում,

գ) ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների ղեկավարում,

դ) ուսանողների խորհրդատվությունների անցկացում,

ե) ամբիոնի ուսումնամեթոդական և հետազոտական աշխատանքներին մասնակցություն, գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակում,

զ) հանրապետական և միջազգային գիտաժողովներում զեկուցումների ներկայացում:

#### 14.4. *Դասախոսի* համար՝

ա) միջին մասնագիտական, բակալավրի կրթական ծրագրերով դասախոսությունների (սահմանափակ ժամաքանակով), գործնական և լաբորատոր պարապմունքների վարում,

բ) հաշվեգրաֆիկական, կուրսային աշխատանքների/ նախագծերի ղեկավարում,

գ) ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների ղեկավարում,

դ) ուսանողների խորհրդատվությունների անցկացում,

ե) ամբիոնի ուսումնամեթոդական և հետազոտական աշխատանքներին մասնակցություն:



#### IV. ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

15. Գիտամանկավարժական կազմի պաշտոնավարման տարիքային սահմանները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

16. Համալսարանի գիտամանկավարժական կազմը համալրվում է հետևյալ ձևերով.

16.1. Թափուր պաշտոնների մրցութային տեղակալման միջոցով, որոնք ամբիոններում կարող են առաջանալ հետևյալ դեպքերում՝

- ուսումնական բեռնվածության աճի,
- այլ պատճառներով գիտամանկավարժական կազմում թափուր պաշտոնատեղի առկայության:

16.2. Գիտամանկավարժական պաշտոնների նշանակման միջոցով:

16.3. Աշխատանքային պայմանագրի վերակնքման միջոցով.

16.3.1. Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո գիտամանկավարժական աշխատողի հետ կարող է կնքվել նոր աշխատանքային պայմանագիր՝ մինչև 5 տարի ժամկետով, առանց մրցութային ընտրության՝ պայմանագրային ժամկետում երա գիտամանկավարժական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա և ամբիոնում համապատասխան ուսումնական բեռնվածքի առկայության դեպքում: Դրա համար պայմանագրի ժամկետը լրանալուց 4 ամիս առաջ տվյալ պաշտոնը զբաղեցնող անձը, սահմանված կարգով, համապատասխան ամբիոնի վարիչին ներկայացնում է հաշվետվություն՝ պայմանագրի ժամկետում իր իրականացրած գործունեության վերաբերյալ:

16.3.2. Ամբիոնը, քննարկելով թեկնածուի գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ ներկայացրած հաշվետվությունը, ընդունում է համապատասխան որոշում, որը հաշվետվության հետ ուղարկում է ինստիտուտի/մասնաճյուղի գիտական խորհրդի, ֆակուլտետի խորհրդի/ուսումնական կենտրոնի ժողովի քննարկմանը: Վերջինս կայացնում է համապատասխան որոշում և համաձայնեցնելով համակարգող պրոռեկտորի հետ՝ առաջարկություն է ներկայացնում ռեկտորին տվյալ անձին, առանց մրցութային ընտրության, մինչև 5 տարի ժամկետով հրամանագրելու վերաբերյալ:

17. Մրցութային եղանակով Համալսարանի գիտամանկավարժական կազմի ձևավորումն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

• թափուր պաշտոնների տեղակալման համար (կետ 16.1) հավակնորդների գործերի քննարկման արդյունքով կազմակերպվում է մրցութային ընտրություն: Մրցույթն անցած հավակնորդի հետ Համալսարանի ռեկտորը կնքում է պայմանագիր և հրամանագրում նրան համապատասխան պաշտոնում,

• գիտամանկավարժական նշանակուլի պաշտոն զբաղեցնելու (կետ 16.2) և պայմանագիրը վերակնքելու (կետ 16.3) դեպքերում հավակնորդի գործերի քննարկման արդյունքով կնքվում է պայմանագիր (առանց մրցույթ անցկացնելու), և նա հրամանագրվում է համապատասխան պաշտոնում:

18. Սահմանվում են գիտամանկավարժական պաշտոններում աշխատանքային պայմանագրի կնքման հետևյալ ժամկետները.

18.1. *պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ*՝ մինչև 5 տարի ժամկետով,

18.2. *դասախոս*՝ մինչև 3 տարի ժամկետով,

18.3. *պատվավոր պրոֆեսորի* կոչումը շնորհվում է ան-  
ժամկետ:

19. Մույն կարգի կետ 16.1-ում եզված դեպքերում պաշ-  
տոնատեղի հավակնորդը, առանց մրցույթ անցնելու, կարող է  
աշխատանքային պայմանագրով պաշտոնում հրամանագրվել  
Համալսարանի ռեկտորի հրամանով՝ մինչև 1 տարի ժամկե-  
տով:

20. Գիտամանկավարժական աշխատողի հետ կնքված  
աշխատանքային պայմանագրի ժամկետում, որպես կանոն,  
յուրաքանչյուր տարի անցկացվում է աշխատողի գիտաման-  
կավարժական գործունեության գնահատման ուսումնասիրու-  
թյուն՝ Համալսարանում սահմանված կարգով:

21. Առկա հաստիքների՝ տարբեր պատճառներով վերաց-  
ման (ուսումնական բեռնվածության նվազում, մասնաճյուղ/ֆինս-  
տիտուտի/ֆակուլտետի, ուսումնական կենտրոնի կամ ամբ-  
իոնի լուծարում և այլն), ինչպես նաև պայմանագիրը չվերա-  
կնքելու դեպքերում գիտամանկավարժական պաշտոն զբաղեց-  
նող անձին պայմանագրի ժամկետի ավարտից առնվազն 2  
ամիս առաջ տրվում է համապատասխան գրավոր ծանուցում:

## V. ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԱՏԵՂԻ ՏԵՂԱԿԱԼՈՒՄԸ

22. Գիտամանկավարժական թափուր պաշտոնատեղի  
մրցույթի վերաբերյալ հայտարարությունը տպագրվում է «Հա-  
յաստանի Հանրապետություն» օրաթերթում, ՀԱՊՀ «Պոլիտեխ-  
նիկ» թերթում և զետեղվում ինտերնետային կայքում  
([www.polytech.am](http://www.polytech.am)), որպես կանոն, տարին 2 անգամ՝ մայիս և  
հոկտեմբեր ամիսներին: Հայտարարության մեջ եզվում են  
մրցույթի պայմանները, պաշտոնատեղի հավակնորդին ներկա-  
յացվող պահանջները և դիմումների ներկայացման ժամկետը:

23. Պաշտոնատեղերի հավակնորդները հայտարարության  
մեջ եզված ժամկետում Համալսարանի ընդհանուր բաժին են  
ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Համալսարանի ռեկտորի անունով,
- կադրերի հաշվառման անձնական թերթիկը,
- ինքնակենսագրություն,
- աշխատանքային գրքույկի պատճենը,
- բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի)/գի-  
տական աստիճանի դիպլոմի և գիտական կոչման վկայագրի  
պատճենները,
- հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշ-  
խատանքների սահմանված կարգով հաստատված ցուցակները,
- վերապատրաստման ճանապարհով որակավորման  
բարձրացման վերաբերյալ հավաստագրի պատճենը (առկա-  
յության դեպքում),
- տվյալներ պարզաստրումների, մրցանակների և պատ-  
վավոր կոչումների վերաբերյալ:



24. Հավակնորդների դիմումները գրանցվում են Համալսարանի ընդհանուր բաժնում: Դիմումը չի ընդունվում, եթե չի պահպանված դիմումի ներկայացման ժամկետը:

25. Համալսարանի ռեկտորի կողմից մրցույթին մասնակցելու թույլատվություն ստացած հավակնորդ(ներ)ի գործերը Համալսարանի գիտական քարտուղարի կողմից հղվում են համապատասխան ինստիտուտի/մասնաճյուղի տնօրենին կամ ֆակուլտետի ղեկանի/ուսումնական կենտրոնի ղեկավարին (համահամալսարանական ամբիոնի վարիչին), ով հանձնարարում է համապատասխան ամբիոնի վարիչին, գործերը ստանալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում, ամբիոնում կազմակերպել հավակնորդ(ներ)ի գործերի քննարկումը և ամբիոնի կարծիքի ձևավորումը:

Կարծիքում նշվում են՝

- հավակնորդ(ներ)ի մասնագիտական բնութագիրը,
- մանկավարժական գործունեության զեա հատականը,
- առաջարկվող պաշտոնում հավակնորդի առաջադրման հիմնավորումը,
- ամբիոնի նիստում կազմակերպված քվեարկության արդյունքները:

26. Թափուր պաշտոնատեղի համար մեկից ավելի դիմումների առկայության դեպքում ամբիոնի նիստում գործերի քննարկման արդյունքով ամբիոնը կարող է հիմնավորված առաջնություն տալ հավակնորդներից մեկին, որից հետո բոլոր գործերը ամբիոնի վարիչը հանձնում է ինստիտուտի/մասնաճյուղի տնօրենին/ֆակուլտետի ղեկանի/ուսումնական կենտրոնի ղեկավարին<sup>1</sup>:

<sup>1</sup> Համահամալսարանական ամբիոնի պարագայում ամբիոնի վարիչը գործերը հանձնում է Համալսարանի գիտական քարտուղարին:

27. Ֆակուլտետի ղեպքում ղեկանը, իսկ ուսումնական կենտրոնի ղեպքում ղեկավարը երկշաբաթյա ժամկետում ֆակուլտետի խորհրդի նիստում/ուսումնական կենտրոնի ժողովում կազմակերպում է թափուր պաշտոնատեղի թեկնածության(թյունների) քննարկումը, փակ գաղտնի քվեարկությամբ կարծիքի ձևավորումը՝ ՀԱՊՀ Գիտական խորհրդի քննարկմանն երաշխավորելու նպատակով:

28. Ինստիտուտի/մասնաճյուղի պարագայում տնօրենը երկշաբաթյա ժամկետում կազմակերպում է թափուր պաշտոնատեղի թեկնածության(ույթյունների) քննարկման ինստիտուտի/մասնաճյուղի գիտական խորհրդի նիստում, որի արդյունքում բաց քվեարկությամբ ընդունում է որոշում:

28.1. Դասախոսի, ասիստենտի կամ դոցենտի պաշտոնատեղին հավակնող թեկնածություն(ներ)ն ընտրության նպատակով փակ գաղտնի քվեարկությանը թողնելու վերաբերյալ,

28.2. Պրոֆեսորի պաշտոնատեղին հավակնող թեկնածություն(ներ)ը ՀԱՊՀ Գիտական խորհրդի քննարկմանն երաշխավորելու նպատակով փակ գաղտնի քվեարկությանը թողնելու վերաբերյալ:

29. Գիտամանկավարժական թափուր պաշտոնի թեկնածության(ույթյունների) քննարկման օրակարգով ֆակուլտետի խորհրդի նիստը/ուսումնական կենտրոնի ժողովը վարում է (նախագահում է) ֆակուլտետի ղեկանը/կենտրոնի ղեկավարը (նրա բացակայության դեպքում՝ տեղակալը): Խորհրդի նիստը/կենտրոնի ժողովն իրավագոր է, եթե ներկա են խորհրդի/ժողովի հաստատված կազմի ոչ պակաս 2/3-ը:

30. Դասախոսի, ասիստենտի և դոցենտի թափուր պաշտոնի թեկնածության(ույթյունների) քննարկման ու ընտրութ-

յան, ինչպես նաև պրոֆեսորի պաշտոնի թեկնածության(թյունների) քննարկման օրակարգով ինստիտուտի/մասնաճյուղի գիտական խորհրդի նիստը վարում է (նախագահում է) ինստիտուտի/մասնաճյուղի տնօրենը (նրա բացակայության դեպքում տեղակալը): Գիտական խորհրդի նիստն իրավագոր է, եթե ներկա են խորհրդի հաստատված կազմի ոչ պակաս 2/3-ը:

31. Հարցի քննարկումը նախագահը (ինստիտուտի/մասնաճյուղի գիտական խորհրդի կամ ֆակուլտետի խորհրդի/ուսումնական կենտրոնի ժողովի) սկսում է՝ ներկայացնելով ամբիոնի թափուր պաշտոնատեղի համար «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և Համալսարանի կայքում մրցույթի վերաբերյալ հայտարարությունը և Համալսարանի ռեկտորի անունով ստացված դիմումները՝ ըստ դրանց գրանցման հերթականության, այնուհետև ներկայացնում թափուր պաշտոնատեղի թեկնածություն(ներ)ի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

- ծննդյան թիվը, վայրը և քաղաքացիությունը,
- գիտական աստիճանը և գիտական կոչումը,
- տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցանկը,

• տվյալներ՝ հավակնորդի նախորդող աշխատանքային գործունեության (եթե հավակնորդը Համալսարանի աշխատակից չէ) կամ վերջին 5 տարում մասնագիտական-մասնավարժական գործունեության և վերապատրաստման մասին (եթե հավակնորդը Համալսարանի աշխատակից է),

• տվյալներ՝ պարգևատրումների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ,

• գիտամասնավարժական աշխատողի գործունեության վերաբերյալ ուսանողների գնահատականը<sup>2</sup>:

Վերոնշյալի վերաբերյալ նախագահին կարող են տրվել պարզաբանում պահանջող հարցեր, որոնց պատասխանը, անհրաժեշտության դեպքում, նա կարող է վերահասցեագրել հավակնորդներին: Պարզաբանում պահանջող հարցերի սահմանափակման առաջարկն արվում է նախագահի կողմից, որի վերաբերյալ գիտական խորհուրդը/խորհուրդը/ժողովն ընդունում է որոշում՝ բաց քվեարկությամբ:

Թեկնածու(ներ)ի ներկայությունը խորհրդի նիստում/ժողովում, որպես կանոն, պարտադիր է: Անհաղթահարելի պատճառով բացակա թեկնածուի մասին խորհուրդը/ժողովը լսում է նախագահի պարզաբանումները և բաց քվեարկությամբ ընդունում է որոշում՝ այդ թեկնածությունը քննարկելու կամ քննարկումից հանելու վերաբերյալ:

32. Նախագահը ներկայացնում է թափուր պաշտոնատեղի թեկնածու(ներ)ի՝ ամբիոնի նիստում գործերի քննարկման արդյունքում մրցույթի անցկացմամբ ձևավորված ամբիոնի նիստի կարծիքը (ինստիտուտի/մասնաճյուղի պարագայում՝ նաև ինստիտուտի/մասնաճյուղի մրցութային հարցերի և գիտական կոչումների մշտական հանձնաժողովի եզրակացությունը): Վերոնշյալի վերաբերյալ նախագահին կարող են տրվել պարզաբանում պահանջող հարցեր:

33. Այնուհետև, նախագահի առաջարկով, սկսվում է մտքերի փոխանակություն՝ ելույթներ թեկնածու(ներ)ի վերաբերյալ:

<sup>2</sup> Համալսարանում վերջին 3 և ավելի տարիներին գիտամասնավարժական աշխատանք կատարած հավակնորդի համար:



34. Ելույթներին տրվող ժամանակն որոշվում է բաց քվեարկությամբ:

35. Մտքերի փոխանակությունը և ելույթները դադարեցվում են նախագահի առաջարկությամբ, որի վերաբերյալ կայացվում է որոշում՝ բաց քվեարկությամբ:

36. Թափուր պաշտոնի թեկնածուները փակ գաղտնի քվեարկության թողնելու կամ թեկնածուների ինքնաբացարկի մասին որոշումն ընդունվում է յուրաքանչյուր թեկնածուի դեպքում առանձին-առանձին՝ բաց քվեարկությամբ: Թեկնածուն կարող է հայտարարել ինքնաբացարկ՝ մինչև գիտական խորհրդի/խորհրդի/ժողովի որոշմամբ նրան փակ գաղտնի քվեարկության թողնելու պահը:

37. Փակ գաղտնի քվեարկությունն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար գիտական խորհուրդը/խորհուրդ/ժողովը բաց քվեարկությամբ իր կազմից ընտրում է ոչ պակաս 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով, որի կազմում չեն կարող լինել մրցույթին մասնակցող թեկնածուները: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

38. Հաշվիչ հանձնաժողովը գիտական խորհրդի/խորհրդի/ժողովի յուրաքանչյուր անդամին տալիս է մեկ քվեաթերթիկ, որը ստանալիս ևս ստորագրում է նիստի/ժողովի ներկայաթերթիկում:

39. Միակ թեկնածության քվեարկության համար քվեաթերթիկի մեջ նշվում են թեկնածուի ազգանուն անունը և "կողմ" ու "դեմ" բառերը, որոնց դիմաց պատկերվում են դատարկ քառակուսի վանդակներ (Հավելված 1):

Մեկից ավելի թեկնածությունների դեպքում քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով նշվում են թեկնածուների ազգանուն անունները և դրանց դիմաց՝ դատարկ քառակուսի վանդակները (Հավելված 2):

40. Քվեարկողը միակ թեկնածուի օգտին քվեարկելու դեպքում նրա ազգանվան դիմացի «կողմ են» բառի դիմաց դատարկ վանդակում դնում է V-աձև նշան, իսկ դեմ քվեարկելու դեպքում՝ նույն V-աձև նշանը դնում է «դեմ են» բառի դիմաց դատարկ վանդակում: Այդ վանդակներում և քվեաթերթիկում այլ նշումներ չեն կատարվում:

41. Մրցութային տեղին մի քանի անձի հավակնելու դեպքում քվեարկողը նշում է անում միայն իր նախընտրած թեկնածուի ազգանվան դիմացի վանդակում, իսկ եթե դեմ է բոլոր հավակնորդներին, ապա նշում է կատարում միայն «Բոլորին դեմ են» բառերի դիմաց պատկերված դատարկ վանդակում:

42. Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն: Մեկից ավելի թեկնածությունների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ ստացած ձայների քանակի նվազման հաջորդականության:

43. Քվեարկության արդյունքում անվավեր են ճանաչվում այն քվեաթերթիկները, որոնցում՝

ա) որևէ թեկնածուի ազգանվան դիմաց դատարկ վանդակներում V-աձև նշում չի կատարված, կամ կատարված է մեկից ավելի V-աձև նշում,

բ) առկա է տվյալ մրցույթի համար սահմանված տեղերի քանակից ավելի կողմ քվեարկություն,

գ) կան չնախատեսված նշումներ, ընդգծումներ, գրառումներ, ջնջումներ:



Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը:

44. Միակ թեկնածության դեպքում թեկնածուն համարվում է ընտրված/առաջադրված, եթե նրա օգտին քվեարկել է նիստին/ժողովին ներկա անդամների պարզ մեծամասնությունը:

45. Ինստիտուտի/մասնաճյուղի գիտական խորհրդի նիստում դասախոսի, ասիստենտի կամ դոցենտի պաշտոնատեղի համար մեկից ավելի թեկնածությունների դեպքում նրանցից որևէ մեկի՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը չստանալու դեպքում նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են առավելագույն ձայներ ստացած երկու (հավասար ձայների դեպքում՝ նաև 2-ից ավելի) թեկնածուները:

45.1. Եթե միակ թեկնածուն կամ մի քանի թեկնածությունների դեպքում կրկնակի քվեարկության մասնակցած թեկնածուն չի ստանում խորհրդի նիստին/ժողովին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը, ապա ընտրությունը համարվում է չկայացած:

46. Ընտրության արդյունքները հաստատվում են նիստի/ժողովի որոշմամբ՝ բաց քվեարկությամբ:

47. Ինստիտուտի/մասնաճյուղի գիտական խորհուրդն ընտրության արդյունքների հիման վրա ընդունում է որոշում՝ դասախոսի, ասիստենտի կամ դոցենտի պաշտոնում թեկնածուի ընտրման և համապատասխան պաշտոնում նրա նշանակման մասին Համալսարանի ռեկտորին առաջարկություն ներկայացնելու համար, իսկ պրոֆեսորի պաշտոնատեղի թեկնածու(ներ)ի գործերը հանձնում է ՀԱՊՀ գիտական քարտուղարին՝ դրանք Գիտական խորհրդի Գիտական կոչումների

շնորհման և մրցութային հարցերի հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

48. Ֆակուլտետի խորհրդի նախագահը/ուսումնական կենտրոնի ղեկավարը խորհրդի նիստի/ժողովի (համահամալսարանական ամբիոնի վարիչը՝ ամբիոնի նիստի) արձանագրությունից քաղվածքը թեկնածու(ներ)ի գործերի հետ հանձնում է ՀԱՊՀ գիտական քարտուղարին՝ դրանք Համալսարանի Գիտական խորհրդի Գիտական կոչումների շնորհման և մրցութային հարցերի հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

49. Գիտական խորհրդի Գիտական կոչումների շնորհման և մրցութային հարցերի հանձնաժողովը, տասնօրյա ժամկետում քննարկելով թափուր պաշտոնատեղերի հավակնորդների գործերը, համապատասխան եզրակացությամբ դրանք ներկայացնում է ՀԱՊՀ Գիտական խորհրդի քննարկմանը:

50. Հանձնաժողովի եզրակացության հիման վրա ՀԱՊՀ Գիտական խորհուրդը, որպես կանոն, մեկամսյա ժամկետում քննարկում է թափուր պաշտոնի տեղակալման հարցը և փակ գաղտնի քվեարկությամբ ընդունում որոշում՝ մրցույթով անցած և առավելագույն ձայներ ստացած թեկնածուին տվյալ պաշտոնում նշանակելու վերաբերյալ Համալսարանի ռեկտորին առաջարկություն ներկայացնելու մասին:

Ընտրությունների անցկացման ընթացակարգը սահմանվում է Համալսարանի Գիտական խորհրդի կանոնակարգով:

51. Պաշտոնի տեղակալման որակական պահանջները բավարարող հավակնորդների բացակայության կամ սույն կանոնակարգի 27-50 կետերով նախատեսված ընթացակարգերի իրականացման արդյունքներով պաշտոնի թափուր մնալու դեպքում մրցույթը չեղյալ է համարվում:

**VI. ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՆՇԱՆԱԿՈՎԻ  
ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՈՒՄԸ**

52. Համալսարանի գիտամանկավարժական կազմի համար սահմանված նշանակովի պաշտոնները կարող են զբաղեցվել սույն կանոնակարգի II բաժնի կետ 9-ում նշված պայմանների բավարարման դեպքում, ընդ որում, նշված գործընթացը (առանց մրցույթ անցկացնելու) սկսելու համար հիմք են ծառայում ինստիտուտի/մասնաճյուղի տնօրենի կամ ֆակուլտետի ղեկանի/կենտրոնի ղեկավարի հետ համաձայնեցված ամբիոնի վարիչի (համահամալսարանական ամբիոնի վարիչի) համապատասխան ծառայողական գրությունը և Համալսարանի համակարգող պրոռեկտորի դրական եզրակացությունը, որից հետո Համալսարանի ռեկտորը համապատասխան որոշում է կայացնում:

**VII. ՀԱՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ՊՐՈՖԵՍՈՐԻ ԿՈՉՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄԸ**

53. ՀԱՊՀ Պատվավոր պրոֆեսորի կոչման շնորհումն իրականացվում է ըստ ՀՊՀՀ Գիտական խորհրդի 2003թ. հունիսի 2-ի թիվ 54 որոշմամբ հաստատված «ՀՊՀՀ Պատվավոր պրոֆեսորի կոչման շնորհման կարգ»-ի:

ՀԱՊՀ Պատվավոր պրոֆեսորի կոչումը շնորհվում է Հայաստանի կամ արտերկրի վաստակաշատ պրոֆեսորներին՝ առավել ակնհայտ գիտամանկավարժական ավանդի և Համալսարանին մատուցած բացառիկ ծառայությունների համար:

54. ՀԱՊՀ Պատվավոր պրոֆեսորի կոչման հավակնորդների վերաբերյալ միջնորդությունները ներկայացնում է ՀԱՊՀ ռեկտորատը՝ ՀԱՊՀ ռեկտորի առաջարկությամբ:

55. ՀԱՊՀ Պատվավոր պրոֆեսորի կոչումը շնորհվում է ՀԱՊՀ Գիտական խորհրդի որոշմամբ:

56. ՀԱՊՀ Պատվավոր պրոֆեսորի կոչմանն արժանացած անձանց հանձնվում է համապատասխան դիպլոմ, որպես կանոն, ՀԱՊՀ Գիտական խորհրդի կիստում:

57. ՀԱՊՀ Պատվավոր պրոֆեսորի դիպլոմը ստորագրում է ՀԱՊՀ Գիտական խորհրդի նախագահը:

Դիպլոմի պատճենը պահպանվում է ՀԱՊՀ Գիտական խորհրդի արխիվում:

**Հավելված 1**

Քվեարկողը թեկնածուի օգտին քվեարկելու դեպքում նրա ազգանվան դիմացի «կողմ եմ» բառի դիմաց դատարկ վանդակում գրիչով դնում է V-աձև նշան, իսկ դեմ քվեարկելու դեպքում գրիչով նույն V-աձև նշանը դնում է «դեմ եմ» բառի դիմաց՝ դատարկ վանդակում: Այդ վանդակներում և քվեաթերթիկում այլ նշումներ չեն կատարվում:

Ք Վ Ե Ս Ք Ե Դ Ք Ի Կ			
Ն/հ	Ա.Ա.Հ	Հայցվող պաշտոնը	Քվեարկություն
1.	..... .....	.....	Կողմ եմ <input type="checkbox"/> Դեմ եմ <input type="checkbox"/>

**Հավելված 2**

Քվեարկողը դնում է V-աձև նշան միայն իր նախընտրած թեկնածուի ազգանվան դիմացի վանդակում, իսկ եթե դեմ է բոլոր հավակնորդներին, ապա նա նույն V-աձև նշանը դնում է միայն «Բոլորին դեմ եմ» բառերի դիմաց պատկերված դատարկ վանդակում:

Այդ վանդակներում և քվեաթերթիկում այլ նշումներ չեն կատարվում:

Ք Վ Ե Ս Ք Ե Դ Ք Ի Կ			
Ն/հ	Ազգանուն անուն հայրանուն	Հայցվող պաշտոնը	Կողմ
1.	.....		
2.	.....		
3.	.....		
4.	Բոլորին դեմ եմ		